ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Ես՝ _____ (անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի կամ ԱՁ-ի անվանում, գործադիր մարմնի ղեկավար անձի անուն, ազգանուն) սույնով հավաստում եմ, որ ամբողջությամբ ծանոթացել եմ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում կազմակերպված ՔՀԿ-ների կողմից բյուջետային տեղեկատվության տեղեկացվածության, կարիքների և օգտագործման ելակետային գնահատման ծառայության N S 2 ծածկագրով գնման մրցույթի փաստաթղթերին և սույն հավաստագրի ստորագրման օրվա դրությամբ չունեմ որևէ շահերի բախում: «Շահերի բախում» հասկացության տակ ես հասկանում եմ այնպիսի իրավիճակ, երբ ես չունեմ իմ, իմ հետ փոխկապակցված անձի կամ երրորդ անձի հետ կապված տնտեսական շահ, քաղաքական կամ ազգային, ընտանեկան կամ զգացմունքային կապեր կամ ցանկացած այլ կապ կամ համատեղ շահագրգռվածություն (այսուհետ՝ մասնավոր շահ), որն ազդում է կամ առերևույթ ազդում է կամ ողջամտորեն կարող է ազդել ՔՀԿ-ների կողմից բյուջետային տեղեկատվության տեղեկացվածության, կարիքների և օգտագործման ելակետային գնահատման ծառայության N S 2 ծածկագրով գնման մրցույթին ներկայացված հայտի պատշաճ, օբյեկտիվ և անաչառ գնահատման վրա:

Ես սույնով պարտավորվում եմ չառաջնորդվել մասնավոր շահով, չկատարել այնպիսի գործողություն, դրսևորել անգործություն կամ որոշում ընդունել (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել ՔՀԿ-ների կողմից բյուջետային տեղեկատվության տեղեկացվածության, կարիքների և օգտագործման ելակետային գնահատման ծառայության ծառայության գնման մրցույթին մասնակցած հայտատուի ընտրությանը:

Ես սույնով պարտավորվում եմ անհապաղ տեղեկացնել «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը ցանկացած իրավիճակի մասին, որն իրենից ներկայացնում է շահերի բախում կամ կարող է առաջացնել հնարավոր շահերի բախում:

Ես գիտակցում եմ, որ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը իրավունք է վերապահվում ստուգել սույն տեղեկատվության ճշմարտացիությունը, և ես տեղյակ եմ այն հետևանքների մասին, որոնք կարող են ծագել իմ կողմից տրամադրված ցանկացած կեղծ հայտարարության համար:

_____

(ստորագրություն)
անուն, ազգանուն

--.01.2023թ.